ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՑԸ ՎԱՏԻԿԱՆ

1999 թվականի մարտի 24-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հովանավորությամբ եւ անմիջական ջանքերով, Վատիկանի Թանգարանի Սիքստինյան սրահում բացվեց Հայոց մկրտության 1700-ամյակին նվիրված «Հռոմ-Հայաստան» ցուցահանդեսը։

Այս առիթով, հակառակ իր առողջական վիճակին, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը մարտի 23-ին Լոնդոնից ժամանեց Հռոմ՝ Մայր Աթոռի բարերար եւ ցուցահանդեսի գլխավոր հովանավոր Վաչե Մանուկյանի անձնական ինքնաթիռով, ուղեկցությամբ գավազանակիր Տ. Խորեն աբդ. Հովհաննիսյանի։ Հռոմի «Շամպինո» օդանավակայանում Վեհափառ Հայրապետը դիմավորվեց Վատիկանի Քրիստոնեական Միության Խորհրդի նախագահ Կարդինալ Էդուարդ Իդրիս Կասսիդիի, Վատիկանի մոտ ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Արմեն Սարգսյանի, Իտալիայում ՀՀ հավատարմատար Գագիկ Բաղդասարյանի կողմից եւ առաջնորդվեց Վատիկանի «Ս. Մարթա» հյուրանոց։

Վեհափառ Հայրապետի շքախմբին մաս կազմելու համար Հռոմ էին ժամանել նաեւ Երուսաղեմի Հայոց Պատրիարք Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանը, Կիլիկիո Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Տ. Արտավազդ արքեպս. Թրթռյանը, ԱՄՆ-ի հայոց Արեւմտյան թեմի առաջնորդ Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանը, Արեւմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ Տ. Գյուտ արքեպս. Նագգաշյանը, 1700-ամյակի տոնակատարության գրասենյակի վարիչ-քարտուղար Տ. Մեսրոպ արքեպս. Աշճյանը, ԱՄՆ-ի հայոց Արեւելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը, Կանադայի հայոց թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանը, Տ. Մուշեղ եպս. Մարտիրոսյանը (Լոս Անջելես), Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի լուսարարապետ Տ. Նուրհան ծ. վրդ. Մանուկյանը, Տ. Պարթեւ աբդ. Գյուլումյանը (Հռոմ) եւ Միլանի հայոց հոգեւոր հովիվ Տ. Սարգիս քհն. Սարգիսյանը։

Մարտի 24-ի առավոտյան, ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի գլխավորած պետական պատվիրակության հետ, Հայաստանից Հռոմ ժամանեցին նաեւ Վեհափառ Հայրապետի շքախմբի մյուս անդամները՝ Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ եւ Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը, Արցախի թեմի առաջնորդ Տ. Պարգեւ եպս. Մարտիրոսյանը, Հարավային Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը, Արագածոտնի թեմի առաջնորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը, Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչ Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանը եւ Գերագույն Հոգեւոր Խորհրդի անդամ Ռաֆայել Պապայանը։

«Հռոմ-Հայաստան» ցուցահանդեսի պաշտոնական բացումը

Նույն օրը, երեկոյան ժամը 17.30-ին, Վատիկանի Առաքելական Գրադարանի Գահասրահում (Sala Regia) տեղի ունեցավ ցուցահանդեսի պաշտոնական բացումը՝ նախագահությամբ Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու Քահանայապետ Հովհաննես-Պողոս Բ Պապի, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա-ի եւ ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի: Պաշտոնական բացման արարողությունից առաջ տեղի էր ունեցել Հռոմի Պապի, Վեհափառ Հայրապետի եւ ՀՀ նախագահի առաջին կարճ հանդիպումը:

Պաշտոնական բացման արարողությանը Վեհափառ Հայրապետի եւ ՀՀ նախագահի շքախմբերի անդամներից բացի ներկա էին Վատիկանի Պետական Քարտուղար Կարդինալ Անջելո Սոդանոն, Արեւելյան Կաթոլիկ Եկեղեցիների Խորհրդի նախագահ Կարդինալ Աքիլլե Սիլվեստրինին, Քրիստոնեական Միության Քահանայապետական Խորհրդի նախագահ Կարդինալ Էդուարդ Իդրիս Կասսիդին, Վատիկանի Առաքելական Գրադարանի պատվավոր տնօրեն Կարդինալ Լուիջի Պոջջին, Կիլիկիո Կաթոլիկ Հայոց Պատրիարք Հովհաննես-Պետրոս ԺԸ Գասպարյանը, Վատիկանի Պետական քարտուղարի փոխանորդ Ջիովաննի Բատիստա Ռե արքեպիսկոպոսը, Վատիկանի Միջպետական հարաբերությունների բաժնի վարիչ Ժան-Լուի Թորան արքեպիսկոպոսը, Վատիկանի Առաքելական Գրադարանի տնօրեն Խորխե Մարիա Մեջիա արքեպիսկոպոսը, Քրիստոնեական Միության Քահանայապետական Խորհրդի քարտուղար Պիեռ Դյուպրե եպիսկոպոսը, բազմաթիվ այլ արքեպիսկոպոսներ ու եպիսկոպոսներ, Վատիկանում հավատարմագրված դիվանագետներ, գիտնականներ, դասախոսներ, արվեստագետներ, սփյուռքահայ հայտնի դեմքեր:

Պաշտոնական բացման արարողության սկզբում ելույթ ունեցավ ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանը: Հանրապետության նախագահը շեշտեց հայ քրիստոնեական մշակույթի համամարդկային արժեքը եւ գոհունակություն հայտնեց Հայաստանի Հանրապետության ու Վատիկանի հետզհետե խորացող կապերի համար, որի արտահայտությունն էր ներկա ցուցահանդեսը:

Ապա Վեհափառ Հայրապետի խոսքն անգլերեն լեզվով ընթերցեց Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը.

«Իմ սրտի խորքում ես զգում եմ, որ այս ցուցահանդեսի (իր տեսակի եւ ծավալի մեջ մի աննախադեպ երեւույթ) բացման հանդիսավոր առիթով մեզանից յուրաքանչյուրս ոչ թե սոսկ անցյալի նվաճումների դիտողներն ենք, այլ պատմակերտ գործընթացի մասնակիցներ:

Ես ամբողջ սրտով եւ երախտագիտությամբ ողջունում եմ իմ սիրելի եղբորս ի Քրիստոս՝ Նորին Սրբություն Հովհաննես-Պողոս Բ-ին, ում ներկայությունը եզակի եւ էկումենիկ անկեղծ ոգի է հաղորդում այս մշակութային իրադարձությանը: Ես Նորին Սրբության հետ ունեցած իմ նախորդ հանդիպումներից լավ գիտեմ, որ իր երիտասարդության վաղ օրերից, իր սիրելի հայրենիք Լեհաստանում, նա հատուկ սեր եւ խոր համակրանք է ունեցել հայ ժողովրդի, Արարատ լեռան Աստվածաշնչական երկրի, Առաքելական Եկեղեցու, նրա մշակութային ժառանգության եւ հանուն արդարության պայքարի նկատմամբ:

Ես շնորհակալություն իմ հայրենում նրան՝ քրիստոնեության մասին իր տիեզերական տեսլականի եւ ողջ մարդկության նկատմամբ իր անկեղծության ու սիրո ոգու համար: Թող Աստված նրան բազում տարիների քաջառողջության օրհնություններ շնորհի. որպեսզի. առաջ տանի իր հսկայական պատասխանատվություններն այս հատուկ ժամանակահատվածում. որն իրար է միացնում մեր ընդհանուր քրիստոնեական պատմության Բ եւ Գ հազարամյակները:

Վատիկանի Գրադարանում հյուրընկալված «Հռոմ-Հայաստան» ցուցահանդեսն ինքնին խոսում է իր մասին. այն ավելորդ մեկնաբանության կարիք չունի: Այն. ինչը ես արժանի եմ համարում հատուկ նշանակության եւ միջազգային մուտքեցման. Հայ Եկեղեցու պաշտոնական հիմնադրության 1700-ամյակն է. որի արմատները հասնում են Առաքելական դարաշրջանին: Ողջ աշխարհին հայտնի ավանդություն է. որ մեր Տիրոջ 301 թվականին Հայաստանի արքա Տրդատն ու Ս. Գրիգոր Պարթեւը. որը հայտնի է որպես Լուսավորիչ. քրիստոնեական հավատքը հայտարարեցին որպես ազգի կրոն:

Այդ ժամանակից ի վեր. տասնյոթ դարեր. քրիստոնեական վկայությունն առաջ տարվեց Հայաստանի հողում եւ հայ ժողովրդի կյանքում. ողջ աշխարհով մեկ՝ առանց ընդհատման եւ խոր հավատարմության. տոկունության ու հարատեւության ոգով:

Այս ցուցահանդեսը մեկն է աշխարհի զանազան մասերում ծավալված մշակութային գործունեությունների շարքում (նման ցուցահանդեսներ արդեն եղել են Մոսկվայի Կրեմլում. Աթենքում (Հունաստան) եւ Հելսինկիում (Ֆինլանդիա))՝ հայ նոր սերնդին եւ ընդհանրապես աշխարհին ներկայացնելու Քրիստոսին. Իր Եկեղեցուն եւ մարդկությանը ծառայելու այս 1700 տարիների ոգին եւ արժեքը: Իմ ըմբռնումով. այն. ինչ պատահեց Հայաստանում 301-ին. Հայաստանի սահմաններում պարփակված դեպք չէր: Այն քրիստոնեական հավատքի ժառանգության մասն է եւ պատկանում է համաքրիստոնեական. համաշխարհային մշակույթին: Հայաստանի դարձի վավերական բնույթը ճշմարտապես էկումենիկ է՝ այս բառի իրական իմաստով. այն խոսում է ողջ բնակեցված աշխարհի բոլոր ժողովուրդներին:

Ինչպես որ ես ասել եմ ուրիշ առիթներով եւ ավելի կատարյալ ձեւով. 1700-ամյակի տոնակատարությունը պետք է ընդունվի եւ առաջ տարվի այնպես. որ այն դառնա վերանորոգության ժամանակաշրջան մեր Հայ Եկեղեցու համար՝ դիպչելով մեր ժողովրդի կյանքի յուրաքանչյուր բնագավառին: Գալիք տոնակատարությունը մեզ հնարավորություն է տալու ավելի գիտակից դառնալ մեր քրիստոնյայի կարգավիճակի մասին՝ այսօրվա աշխարհում:

Ցուցահանդեսը. նույնպես. մեզ գերազանց հնարավորություն է տալիս ավելի պատասխանատու եւ ստեղծագործ կերպով խորհելու մեր ներկա դերի մասին՝ քրիստոնեական վկայության անցած տասնյոթ դարերը դարձնելով ներշնչման աղբյուր՝ «Տիրոջ այգում» նոր նվաճումների համար:

Իհարկե. եթե չլիներ՝ 1700-ամյակի այս գերազույն արժեքը. ինչ համար պատշաճ չէր լինի ձեռնարկել իմ այս ճամփորդությունը դեպի Վատիկան՝ իմ ներկա առողջական վիճակում: Այնուամենայնիվ. ես հատուկ ճիգ թափեցի գալու. իմ սիրեցյալ եղբոր՝ Նորին Սրբություն Հովհաննես-Պողոս Բ Պապի հետ. եւ միացա Հայ Եկեղեցու Նվիրապետական Աթոռները ներկայացնող բարձրաստիճան

Հանդիպում Հայաստանի Հանրապետության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը Ֆրանսիայի Հանրապետության նախագահ Ֆրանսուա Միտերանի հետ

եկեղեցականներին՝ ցույց տալու համար այս տասնյոթ դարերի հավատարիմ ծառայության կարեւորությունը տիեզերական Քրիստոնեական Եկեղեցուն, ընդհանրապես աշխարհին եւ հայ ժողովրդին: Պատմական փաստ է՝ հայ նահապետների սերունդներով վավերացված, թե այս ծառայությունը որքան թանկ արժեցավ:

Այն փաստը, որ 1700-ամյակի տոնակատարությունը համընկնում է հայոց պատմության նոր դարաշրջանի առաջին տասնամյակին, անշուշտ մեծ կարեւորության զարգացում է: Մեր ազատ եւ անկախ պետության դարաշրջանը հոչակվեց Ի դարի վերջին տասնամյակի առաջին տարում, եւ այստեղ՝ այս ցուցահանդեսին, Հայաստանի Հանրապետության Վեհափառը Նախագահ Պրն. Ռոբերտ Քոչարյանի ներկայությունը սրտերը ջերմացնող գործոն է բոլոր հայերի համար: Այս երիտասարդ հանրապետության միջոցով մենք կարող ենք մեզ ներկայացնել աշխարհին ոչ թե որպես օտար համակարգի տիրապետության ու ճնշման ներքո գտնվող մի ժողովուրդ, այլ իր տեսիլքը վերանորոգած մեկը՝ իր վերագտած ազատության շնորհիվ: Թող օրհնյալ լինի Աստծու անունը:

Այսօր ես չեմ կարող հգրաֆակել այս ելույթը՝ առանց Կոսովոյի իսաղաղության համար աղոթելու: Ես հուսով եմ, որ զենված միջամտությունը կկանխվի:

Եզրափակելուց առաջ, ես կկամենայի իմ սրտագեղ շնորհակալությունն ու գնահատանքը հայտնել բոլոր ժողովուրդներին, կազմակերպություններին ու հիմնարկություններին, որոնք բաժին ունեցան այս ազնիվ ծրագրի շրջափեղի իրականացման մեջ՝ Վատիկանի Առաքելական Գրադարանի տնօրենությանը, Վատիկանի մուտ Հայաստանի Դեսպանությանը, Վաչե եւ Թամար Մանուկյան Հիմնարկությանը, Գալուստ Կյուլպենկյան Հիմնարկությանը, 1700-ամյակի Գործադիր Մարմնին եւ պրոֆեսոր Կլոդ Մուքաֆյանին՝ եռանդուն գիտնականին, ում մենք այնքան պարտական ենք իր հատուկտական ջանքերի համար:

Այժմ, երբ ցուցահանդեսը բացված է, ես հորդորում եմ մեր ժողովրդին՝ մուտենալ եւ հաղորդություն մեջ մտնել ստեղծագործականության այն տարբերակիչ ոգու հետ, որը բնութագրել է մեր նախնիներին՝ անցած դարերում: Մենք պատրաստվում ենք հարել քրիստոնեական երրորդ հազարամյակի շեմը, եկեք պատասխանենք՝ դառնալով այդ նույն ոգու նոր եւ խիզախ ջահակիրները այսօրվա եւ գալիք տարիների համար»:

Ջերմ ծափահարություններով ընդունված Վեհափառ Հայրապետի խոսքից հետո իր ուղերձն ընթերցեց Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու Քահանայապետը.

«1. Մեծ երջանկություն է ինձ համար մասնակցել «Հռոմ-Հայաստան» ցուցահանդեսի հանդիսավոր բացմանը, որը հովանավորվում է Էջմիածնի հին ու փառավոր Աթոռի եւ Սուրբ Աթոռի մուտ Հայաստանի Դեսպանության կողմից, Վատիկանի Առաքելական Գրադարանի օժանդակությամբ:

Ես ցանկանում եմ իմորին հարգանքի եւ մեծարանքի զգացումներս արտահայտել Հայաստանի Հանրապետության նախագահ Վեհափառը Պրն. Ռոբերտ Քոչարյանին, որ կամեցավ ներկա լինել այս առիթով: Շնորհակալություն հայտնելով ՀՀ. պրն. Նախագահ, ձեր բարի խոսքերի համար, ես հույս եմ հայտնում, որ Հայաստանը, դեպի արժանի բարգավաճում իր դժվարին ճամփորդության մեջ, կվայելի հարաճուն միջազգային համերաշխություն եւ օգուտ՝ ընդհանուրի

բարիքին նվիրված լուսավորյալ պետական գործիչների առաջնորդությամբ. որպեսզի բոլոր քաղաքացիները կարողանան քաջալերվել ազգի զարգացման մեջ իրենց դերը խաղալով:

Ցնծության մասնավոր պատճառ է, այս հանդիսավոր եւ կարեւոր առիթով. ներկայությունը Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Սրբություն Գարեգին Ա-ի, ուղեկցությամբ Երուսաղեմի Արքեպիսկոպոս Նորին Ամենապատվություն Թորգոմ Պատրիարքի եւ Հայաստանի Առաքելական Եկեղեցու այլ բարձրաստիճան առաջնորդների, քահանաների եւ աշխարհականների: Դուք ցանկացաք Հռոմի Եկեղեցուն պատվել ամենահոյակապ եղանակով՝ ըստ քրիստոնյաների, սիրո վկայությամբ եւ հաղորդության սիրո համբույրով:

Ձերդ Սրբություն, եւ խորապես գնահատում եմ այս նրբազգաց քայլը, որը նոր եւ կարեւոր գլուխ է կազմում Քրիստոսի հետեւորդների միջեւ ամբողջական հաղորդության ընդհանուր որոնումների պատմության մեջ: Հակառակ ճամփորդության դժվարություններին, Դուք եւ Ձեզ ուղեկցող բարձրաստիճան հյուրերը կամեցաք մեկ անգամ եւս ցույց տալ, թե որքան եք Դուք հավատում էկումենիկ խնդրին, որին անխոնջ կերպով նվիրել եք Ձեր եռանդը: Կրկին եւս շնորհակալություն եմ հայտնում պատմական կարեւորություն ունեցող Ձեր խոսքերի համար՝ Ձեր Հռոմ այցելության առիթով 1996-ի դեկտեմբերին, խոսքեր, որոնք արդյունքվեցին հաջորդ ամիս Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Նորին Սրբություն Արամ Ա-ի կողմից: Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Նորին Սրբություն Արամ Ա-ին ես հղում եմ ջերմ հոգեբարական ողջույն եւ Աստվածային առատ օրհնություններ եմ հայցում իր առաքելության համար:

Դուք ձեր ժողովրդին եւ Ձեր Եկեղեցուն ուսուցանել եք, որ հաղորդությունը հրամայական է Քրիստոսի հետեւորդների եւ էական պայման՝ իրենց վկայության համար, «որպեսզի աշխարհը հավատա»: Հաղորդությունը չի նշանակում սեփական ինքնության լուծարում եւ կորուստ: Ավելի շուտ այն միասնական ուխտագնացություն է դեպի մեկ Տեր, պահպանելով այն, ինչ հատուկ է, եւ զորություն ու հարստություն ստանալով, որ գալիս է տիեզերականությունից: Թող ողջ օրհնությունների Հայրը Ձերդ Սրբությանը շնորհի բաշում տարիներ որպես Հայ Եկեղեցու պետի, նոր նախաձեռնությունների սպասումով, որոնք վերանորոգելու են հույսը նրանց, ովքեր հավատում են, որ Քրիստոսի Եկեղեցին մեկ է, որ նա «կարող է լինել միայն մեկ, մեկ եւ միացյալ»:

Ես ջերմ ողջույններ եմ ուղղում իմ սիրելի եղբորը՝ Կաթուղիկ Հայոց Պատրիարք Նորին Ամենապատվություն Հովհաննես-Պետրոս ԺԸ Գասպարյանին, որը նույնպես եկել է այսօր այստեղ՝ մեզ հետ լինելու, իր Եկեղեցու մյուս եպիսկոպոսների ուղեկցությամբ: Ամբողջական հաղորդությունը Պետրոսի Աթոռի հետ, որն այս Եկեղեցին դարձնում է Կաթոլիկ ընտանիքի բաղկացուցիչ մասը, չի բաժանել նրան հոգեւոր կյանքի ու մշակույթի հիասքանչ ժառանգությունից, որն այնքան պատիվ է բերում հայ ժողովրդին, այլ ավելի շուտ մղում է նրան վերանորոգված եռանդով վկայության՝ հանուն միության:

2. Ցուցահանդեսի թեման եւ հայ ժողովուրդը ներկայացնող բարձրագույն եկեղեցական ու քաղաքական դեմքերի այս հավաքը սովորական դեպք չէ: Այն իսկապես մեծապես խորհրդանշական է եւ մղում է անկեղծության, հանդիպման պատրաստակամության եւ մշակութային ջերմերման, որը բնորոշ է հայ ժողովրդի ողջ պատմությանը:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆ

Հակառակ ընդդիմության եւ անգամ ակնհայտ հալածանքի. հայերը չեն փակվել իրենք իրենց մեջ. այլ կենսական են համարել քաց եւ խելացի փոխշփումների մեջ մտնել ուրիշ ժողովուրդների հետ ոչ միայն իրենց սեփական գոյատեւման. այլեւ վավերական զարգացման համար: Ուրիշներից նրանք փոխ են առել հարստացման տարրեր՝ դրանք միաչուլելով իրենց սեփական անսխալ եզակիության հալոցում: Նրանք մշտապես ցույց են տվել նախաձեռնություն եւ խիզախություն՝ հարատեւորեն հենվելով Ավետարանի զորությանը, որը չեւավորել է իրենց պատմությունը եւ ամուր հիմք ապահովել իրենց կյանքի համար: Հայկական սիյուռքը. թեեւ ցավալի փորձառություն, նշան է այս աշխույժ կենսունակության, որն օրինակելի է մնում անգամ այսօր:

Եվ երբ այս կապվածությունն Ավետարանին ներառնում էր. ինչպես համախ էր պատահում. կյանքի զոհաբերություն հանում քրիստոնեական հավատքի նկատմամբ հավատարմության. հայերն իրենց նահատակությամբ ցույց էին տալիս. թե զորության ինչպիսի հրաշքներ կարող է գործել շնորհը նրանց մեջ. ովքեր ընդունում են այն: Տիեզերական Եկեղեցին կարող է միայն մշտական ու խորին երախտագիտություն արտահայտել այս զոհաբերության համար, որը համախ կենդանի վահան ծառայեց՝ պաշտպանելով արեւմտյան քրիստոնեությանը, գերծ պահելով նրան այն փոթանգներից, որոնք կարող էին ծայրահեղ կերպով տխուր լինել:

3. Հայաստանի եւ Հռոմի հարաբերությունը նախորդել է քրիստոնեության գալստյանը. սակայն քրիստոնեությունը շուտով դարձել է այդ հարաբերության բուն պատճառը: Դարեր շարունակ՝ ազատ լինելով սխալ ըմբռնումներից ու բաժանումներից, որոնք ծագեցին Արեւմուտքի եւ Հունական աշխարհի միջեւ, այս հարաբերությունը բնորոշվել է ջերմ, բարի կամքով: Դեսպանությունները, որոնք Հայ Եկեղեցին ուղարկում էր Հռոմ, ընդունվում էին որպես մաքուր եւ կայուն հավատքի վավերացում: Բազմաթիվ առիթներով Պապերը ծիսական առարկաներ են նվիրել Հայ Կաթողիկոսներին որպես եղբայրական մեծարման նշան, եւ հատկանշական է, որ խույրն ու եպիսկոպոսական գավազանը մինչեւ օրս հայ առաջնորդների սրբազան զգեստի մասն են:

Կիլիկիայի Հայկական Թագավորությունն առանձնաշնորհյալ հանդիպման վայր էր լատինների, հույների եւ ասորիների համար. էկումենիկ եղբայրության հատկանշական հանձնառություն ծաղկեց այնտեղ: Հաղորդությունն այդ տարածաշրջանի Հայ Եկեղեցու եւ Հռոմի Եկեղեցու միջեւ հասավ այնպիսի մի աստիճանի, որ հավանաբար երբեք չի եղել այլ դեպքերում: Մշակութային փոխառությունները պտղավետ էին եւ օգտակար՝ հակառակ որոշ դժվարությունների: Եթե այն չախողվեց ավելի տեւական պտուղ տալու մեջ, սա մասամբ ումանց անհաշտության պատճառով էր, ովքեր հավանաբար ի վիճակի չէին ամբողջապես գնահատելու նման նախախնամական հնարավորության արժեքը: Հռոմեական կողմում, ըմբռնումի այս պակասի մի մասն արդյունք էր Արեւմտյան Եկեղեցու ողբերգական ներքին հակամարտությունների եւ նոր կանոնական ու աստվածաբանական գաղափարների առաջացման, որոնք ավելի դժվարացրին Արեւելքի հին ոգեկան ժառանգության ըմբռնումը: Այսօր մեզ համար այս ամենը խորին ափսոսանքի շարժառիթ է, եւ այն մեզ պարտավորեցնում է չանտեսել այն հնարավորությունները, որոնք Հոգին տալիս է մեզ՝ Քրիստոսի բոլոր հետեւորդներին հաղորդության կոչելով:

4. Գահաւորահում ցուցադրուած առարկաները՝ Էջմիածնից բերուած Նոյյան Տապանի մասունքից մինչեւ հին Կիլիկիայից մեզ հասած հնագիրական գլուխգործոցները. սոսկ հիշատակներ չեն. դրանք այն մեծ գործերը նշաններն են. որ Աստուած արել է հայ ժողովրդի համար: Դրանք առավել խորին ինքնաճանաչման եւ առավել մեծ ինքնագնահատման հրաւէր են: Եթէ այդ հեռաւոր ժամանակներում Ներսես Շնորհալու եւ Ներսես Լամբրոնացու նման լուսաւորեալ ու խիզախ մարդիկ հիացրին աշխարհին եւ շարունակում են հիացնել անգամ այսօր՝ սեփական մշակոյթի հանդէպ իրենց սիրով եւ այլոց մշակոյթի նկատմամբ ընկալունակության աքանչելի հավասարակշռությամբ. նրանց օրինակը (եւ ավելի ուշ Մխիթար Սեբաստացի Աբբահոր նմանատիպ շողացող օրինակը) դաս եւ հերնչում պետք է լինի մեզ բոլորիս համար՝ հերկայումս:

Վաղուց անցած ժամանակներում արքայեղցաղ հայերը մեծ իանդուսաւորություն են ցույց տվել Եկեղեցու միության համար. բոլորի արժանիքի եւ յուրաքանչյուրի բնորոշ բնութագրի նկատմամբ հարգանքով: Նրանք առաջ էին անցել իրենց ժամանակներից. հռչակելով արժէքներ. որոնք ամբողջապես չէին ընկալվում: Այժմ. երբ այդ արժէքները դարձել են մեր տիեզերական ժառանգության մասը. մենք չենք կարող ավելի թերի լինել. քան նրանք էին. մենք պետք է քաջություն ունենանք այնպիսի չհոնարկումների. որոնք կհաղթահարեն նախապաշարումներն ու սխալ պատկերացումները:

Միասին Քրիստոսի ուսնահետքերով. *թող սա լինի բոլոր քրիստոնյաների հույսն ու աղոթքը Երրորդ Հազարամյակի եւ Հայոց Մկրտության հազարյոթհարյուրամյակի նախօրյակին:*

Թող Աստուած միշտ օրհնի եւ պահպանի քեզ ժողովրդին ողջ աշխարհում. ուր էլ որ նրանք վկայություն տանեն հավատքի եւ Հայրերի ուսուցման մասին: Թող երկնքից Հայաստանի Եկեղեցու Սուրբ Նահատակներն ու պաշտելի Հովիվները քարեխոսեն մեզ համար՝ սիրո Մայր Մարիամի հետ միասին»:

Խոսքերի փոխանակումից հետո. երկու Հովվապետերն ու ՀՀ նախագահը առիթ ունեցան զմայլվելու ցուցահանդեսի երեք խորհրդանշական նմուշներով. որոնք էին՝ Նոյյան տապանի մասունքը (Մայր Աթոռից). Լեւոն Ա Հայոց արքայի նամակն Ինոկենտիոս Գ Պապին՝ կնքված ոսկյա կնիքով (Վատիկանի փակ դիվանից) եւ 1197 թվականի հունարեն մի ձեռագիր՝ Ներսես Լամբրոնացու հայերեն նշումներով (Վատիկանի Առաքելական Գրադարանից):

Հռոմի Քահանայապետի մեկնումից հետո. Վեհափառ Հայրապետը. անտեսելով իր ֆիզիկական տկարությունը. քայլեց մինչեւ ցուցասրահ. որտեղ կարճ ելույթ ունեցան Վատիկանում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Ա. Մարգայանը եւ Վատիկանի Առաքելական Գրադարանի տնօրեն Խորխե Մեջիա արքեպիսկոպոսը: Ապա Վեհափառը դիտեց ցուցահանդեսի սքանչելի նմուշները եւ վերադարձավ հյուրանոց:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիպումը Հռոմի Պապի հետ

Մարտի 25-ի առավոտյան ժամը 11.30-ին Վատիկանի Պապական պալատում տեղի ունեցավ Հռոմի Պապի եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիպումն ու

ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՈՂՋԱԳՈՒՐՈՒՄ

առանձնազրույցը, որին ներկա էր նաեւ Խաժակ արքեպս. Պարսամյանը: Առանձնազրույցից հետո Հռոմի Պապն ընդունեց Վեհափառ Հայրապետի շքախմբի անդամներին, որի ընթացքում փոխանակվեցին պաշտոնական ուղերձներ:

Վեհափառ Հայրապետն իր ֆրանսերեն ուղերձում, որն ընթերցեց Գյուտ սրբազանը, ասաց.

«Ձիրդ Սրբություն,

Սիրեցյալ եղբայր.

Գոհություն եմ առաքում Տիրոջը, որ ինձ շնորհեց այս մեծ ուրախությունը՝ անչնաչափ հանդիպելու ձեզ իմ կյանքում երրորդ անգամ, եւ վերահաստատելու ու ամրապնդելու այն եղբայրությունը, որ մենք միասնաբար զգացինք մեր առաջին հանդիպման ժամանակ:

Եւ շնորհակալություն եմ հայտնում ձեզ, որ հնարավոր դարձրիք այս հանդիպումը՝ հակառակ առողջական դժվար վիճակին, որի միջով եք անցնում ներկայումս: Եղբայրությունն ու հաղորդությունը հաղթահարում են բոլոր արգելքները:

Հայաստանն ապրում է իր ամենաորոշիչ եւ միեւնույն ժամանակ ամենադժվարին պահերից մեկը՝ պայմանավորված տնտեսական, քաղաքական եւ տարածաշրջանային հակամարտությունների հանգամանքներով:

Մակայն նման ժամանակահատվածում է, որ Եկեղեցիների, մասնավորապես Հռոմեա-Կաթոլիկ Եկեղեցու, եւ բարեկամ երկրների համերաշխությունը կոչված է շոշափելի արտահայտություն, կոնկրետ մասնակցություն շնորհելու Հայաստանին, իր Եկեղեցուն եւ իր Պետությանը:

Խորհրդային կարգերի օրոք քրիստոնեական հավատքը նույնացվում եւ սահմանափակվում էր անցյալի հետ: Կոմունիստները (դուք նրանց շատ ավելի լավ եք ճանաչում, քան ես) արեցին ամեն հնարավորը՝ համոզելու համար մարդկանց, որ այսօրվա ժամանակներում, գիտության ժամանակներում, կրոնը տեղ չունի մարդու եւ հասարակության կյանքում:

Մեկ սերունդ չէ, որ դուրս է եկել հակակրոնական նման գաղափարախոսության այս 70 տարիներից: Եկեղեցու հնավանդ խնդիրն է առաջին հերթին ջնջել ապրված եւ հարյակողական անաստվածության այս ազդեցությունները: Նոր կրթություն սկզբնավորելն ու քրիստոնյաների նոր սերունդ կերտելը հեշտ գործ չէ՝ մասնավորապես այսօրվա աշխարհի ժամանակներում, որը ծայրահեղ աշխարհայնության շարժման տիրապետության տակ է:

Այսօր հարցը մասնավոր դավանանքի (այս կամ այն դավանանքի) հարց չէ, այլ Ավետարանի սկզբունքների քարոզման հարց:

Մենք զգացինք, որ 1996-ի Վատիկան կատարած մեր այցելությունից հետո Հռոմեա-Կաթոլիկ Եկեղեցու կողմից կա որոշակի պատրաստակամություն՝ գործելու Հայաստանի Մայր Եկեղեցու՝ Առաքելական Եկեղեցու հետ: Ձեր ազդեցությունը վճռական է եղել իմ Եկեղեցու հետ համերաշխության այդ նոր մեթոդի մեջ:

Ես կկամենայի, որ մենք ավելի հռանդուն կերպով շարունակենք այս ուղղությամբ»:

Վեհափառ Հայրապետի ուղերձից հետո, իր խոսքն ընթերցեց Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու պետը.

«Օրհնեա. անչա իմ. զՏէր. եւ ամենայն ոսկերք իմ զանուն սուրբ նորա» (Սաղմ. ԾԲ 1)։

Այո. օրհնում եմ Տիրոջը. որ մեզ պարգեւում է շնորհի եւ հոգեւորական հանդիպման այս պահը։ Մեծ ուրախություն է այս օրերին կարողանալ ընդունել Ձեզ. Ձերդ Սրբություն. Նորին Ամենապատվություն Թորգոմ Մանուկյան սրբազանի եւ բոլոր բարեբաստիհնան անչնավորությունների հետ. որ ուղեկցում են Ձեզ։

Ուրախ եմ Վատիկանի Թանգարաններում հայոց պատմության ու մշակույթի մասին մի բացառիկ ցուցահանդեսի ներկայության համար։ Այնտեղ կարող ենք զմայլվել քրիստոնեական հավատքով տոգորված ժառանգությամբ։ Իր արմատների նկատմամբ հավատարմության եւ դժբախտությունների մեջ հաստատակամության շնորհիվ հայ ժողովուրդը կարողացել է իր բազմաթիվ տառապանքները դարձնել ստեղծագործականության եւ դիմադիմի աղբյուր։ Աստանդության համաչափ. Հայ Եկեղեցին հավատքն ստացել է Թադեոս եւ Բարդողիմեոս Առաքյալներից. եւ Սուրբ Գրիգոր Լուսավորչի քարոզչական գործունեության շնորհիվ է. որ Ավետարանը տարածվել է հայ ժողովրդի մեջ՝ հենց Դ դարի սկզբին։ Այդ հնագույն ժամանակներից ի վեր քրիստոնեական հավատքը երբեք չի դադարել լուսավորել ու ներշնչել հայ ժողովրդին՝ իր խորին համոզումի եւ իր ամենօրյա կյանքի մեջ։

Քրիստոնյաները մի քանի օրից տոնելու են Քրիստոսի շարչարանաց. մահվան եւ հարության մեծ խորհուրդը։ «Իսկ եթէ մեռաք ընդ Քրիստոսի. հաւատամք թէ եւ կեցցուք ընդ նմա. գիտեմք եթէ Քրիստոս յարուցեալ է ի մեռելոց. այսուհետեւ ոչ մեռանի. եւ մահ նմա ոչ եւս տիրէ» (Հռոմ. Զ 8-9)։ Երգելու եւ տոնելու ենք մեր փրկության խորհուրդը։ Ի Քրիստոս Հիսուս մեր հավատքը մեր կյանքի. մեր առաքելության եւ մեր Եկեղեցիների միջեւ եղբայրական հաղորդության կապերի հիմքն է։ Բավականությամբ ողջունում եմ կատարված առաջընթացը՝ Աստծու մարմնացյալ Խոսքի. ի Քրիստոս միության մեր միասնական որոնման մեջ. սրանք պտուղն են մեր էկումենիկ հարաբերությունների եւ մեր աստվածաբանական երկխոսությունների։ Անցյալի ցավալի բաժանումները չպետք է շարունակեն բացասական եղանակով ազդել մեր Եկեղեցիների կյանքի ու վկայության վրա։ 2000 թվականի Մեծ Հոբելյանը եւ Հայ Եկեղեցու հիմնադրության տասնյոթերորդ դարադարձը մեզ հաստատուն կերպով հրավիրում են ի Քրիստոս Հիսուս մեր հավատքի ընդհանուր վկայության։

Կաթոլիկ Եկեղեցին եւ Հայ Եկեղեցին զարգացրել են խոր հարաբերություններ. հատկապես Վատիկանի Բ Ժողովից հետո։ Երջանիկ հանդիպումներ տեղի ունեցան 1971-ի այն հիշարժան օրվանից ի վեր. երբ Վազգեն Ա Կաթողիկոսն ու Պողոս Զ Պապը ողջագուրվեցին՝ եղբայրական բարեկամությամբ լի մուտեցումով (Հռոմի քահանայապետը մի փոքր շփոթվում է. Վազգեն Վեհափառի եւ Պողոս Զ Պապի հանդիպումը տեղի է ունեցել 1970-ի մայիսին։ Մեք.-Մ.Ծ.Վ.Ա.)։ Բացի սրանից. կամենում եմ մասնավոր կերպով շնորհակալություն հայտնել Ձերդ Սրբությանը այն ամենի համար. որ կատարել է եւ շարունակում է կատարել. որպեսզի իրականանա քրիստոնյաների միությունը։ Այս ոգով. որ մեզ ոգեւորում է. անհրաժեշտ է մաղթել. որ այնտեղ. որտեղ կաթոլիկ եւ հայ հավատացյալներն ապրում են միասին. նրանք շարունակեն այս եղբայրական քայլերը՝ մարդկանց ծառայության զանազան բնագավառներում հարատեւ նախաձեռնությունների

ՇՈՒՐԻ ՑՈՒՅՑԸ ՊԵՏՈՒՄՅԱՆ Ի ՀԻՍԿԻՐՈ
ԿԱՄՔԻ Ի ԱՍՏՎԱԾԱՅԻՆ-ՊԵՏՈՒՄՅԱՆԻՆ ՀՅՈՒՍԵՍՈՒՄՅԱՆԻ ՄՈՓՈՒԹԵՐԸ

ԷՎԻՈ ՋՕՇՁԻՈՍ Ֆ ՌԻՍՍՎԻՂ
ՂՎՏՁԼՈՒԺԵՈԷ Ո ՂՎԵՁՄՈԵ ԺԼՈՒԼ Ժ ՈՍՆՍԼ-ՈՁՂՂՈԷԻՍԷ

միջոցով։ Որպեսզի կարողանանք չկորցնել ամենանվազագույն հնարավորությունն իսկ՝ խորացնելու եւ ընդարձակելու մեր շոշափելի համագործակցությունն այս եզակի առաքելության մեջ, որը մեզ վստահել է Քրիստոս։

Ձերդ Սրբություն, ուրախությամբ ցնծալով Հայաստան այցելելու հրավերով, որ ինչ հայտնեց Հանրապետության նախագահը, շնորհակալություն եմ հայտնում Ձեզ, որ ինչ մասնակից դարձրիք Ձեր ցանկությանը՝ ինչ ընդունելու որպես Ձեր Էջմիածնի Պատրիարքության հյուրը, զորացնելու համար մեր կապերը եւ ամրացնելու համար քրիստոնյաների միությունը։ Աղոթում եմ Տիրոջը, որպեսզի ինչ թույլ տա իրականացնելու այս այցելությունը։ Շնորհակալություն հայտնելով Ձեզ՝ դնպի Հռոմ այս ճամփորդությունը կատարելու համար, որը քրիստոնեական եղբայրության մեծապես խորհրդանշական արտահայտություն է, մաղթում եմ Ձեզ քաջառողջություն, որպեսզի երկար ժամանակ կարողանաք ծառայել Ձեր Եկեղեցուն։ Հայցում եմ Սուրբ Հոգուց օգնել մեզ, որպեսզի միշտ լինենք մարդկանց ծառաները եւ շարժվենք միության ճանապարհով, որին մեզ հրավիրում է Քրիստոս։ Աղոթում եմ Տիրոջը, որ օրհնի Հայ Եկեղեցին, իր հովիվներին եւ իր հավատացյալներին։ Հայցում եմ Կույս Մարիամից, որի անունն ընդգրկում է փրկության բոլոր խորհուրդները, ինչպես ասում էր Սուրբ Գրիգոր Լուսավորիչը, որպեսզի մեր համայնքներին ուղեկցի իր մայրական քնքշությամբ։ Թող Տերը հայտնի մեզ իր դեմքը եւ մեզ պահպանի խաղաղության մեջ»։

Պապի ճառից հետո տեղի ունեցավ հուշանվերների փոխանակում, որի ընթացքում Վեհափառ Հայրապետը Հռոմի Քահանայապետին նվիրեց արծաթյա ձեռաց խաչ, իսկ Կաթոլիկ Եկեղեցու պետը Հայոց Հայրապետին նվիրեց ոսկեզօծ սկիհ։

Այսքանով ավարտվեց Վեհափառ Հայրապետի Վատիկան այցելության պաշտոնական մասը եւ հաջորդ օրը, մարտի 26-ին, Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը, գավազանակիր Տ. Խորեն աբդ. Հովհաննիսյանի ուղեկցությամբ, մեկնեց Լոնդոն։ Նույն օրը Վեհափառ Հայրապետի շքախմբի անդամները մեկնեցին իրենց պաշտոնատեղիները։

«Հռոմ–Հայաստան» ցուցահանդեսը բաց կլինի մինչեւ հուլիսի 16-ը Հռոմի բնակիչներին եւ հավիտենական քաղաք այցելող բազմահազար զբոսաշրջիկներին ծանոթացնելով հայոց քրիստոնեական ժառանգության անկորնչելի արժեքներին։

ՄԻՔԱՅԵԼ Ծ. ՎՐԴ. ԱՋԱՊԱՀՅԱՆ